ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«08» հուլիսի 2014թ

գրանցված է
29.07.2014թ
117/14298

ՀՐԱՄԱՆ

№ 179-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ԹԻՎ 120-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 3-րդ և 5-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 775-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ, 777-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 և 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 774-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետերի և «Իրավական ակտերի մասին« ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն ու շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և լրացման կարգերը հաստատելու մասին» թիվ 120-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 1-ին հավելվածով հաստատված աղյուսակի /այսուհետ՝ աղյուսակ/ 5-րդ սյունակի «Շինարարություն իրականացնելու վայրը» բառերից հետո լրացնել «...,օբյեկտի տեսակը և շին. աշխատանքներն՝ ըստ ոլորտի /ոլորտների/» բառերը:

2) Աղյուսակի 6-րդ սյունակի «Շինարարության կառույցի տեսակը» բառերը փոխարինել «Շինարարության ծավալը և գումարը (մ ^{2} / հազ. դրամ) » բառերով:

3) Հրամանի 2-րդ հավելվածով հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերում «վանդակում» բառերը փոխարինել «սյունակում» բառերով:

4) Կարգի 4-րդ կետից հանել «..., որոնցով հնարավոր է կապ հաստատել անձի հետ: » բառերը:

5) Կարգի 5-րդ կետի «Հ/հ» բառը փոխարինել «Հ/Հ» բառով:

6) Կարգի 6-րդ կետում «...լրիվ անվանումը» բառերից հետո լրացնել «կամ ֆիզիկական անձի անունը» բառերը:

7) Կարգի 9-րդ կետում «...«Շինարարություն իրականացնելու վայրը»...» բառերից հետո լրացնել «..., օբյեկտի տեսակը և շինարարական աշխատանքներն՝ ըստ ոլորտի /ոլորտների/»...» բառերը, «... շինարարության գտնվելու վայրը...» բառերից հետո՝ «...,կառուցվող /հիմնանորոգվող, վերակառուցվող, արդիականացվող, վերականգնվող/ շինության տեսակը (օրինակ՝ բնակելի, վարչական, առողջապահական, մշակույթի և արվեստի, կրոնական, պաշտամունքային, կրթական, հանգստի, ժամանցի և զբոսաշրջության համար նախատեսված, արտադրական, արդյունաբերական, գյուղատնտեսական նշանակության, կապի, տրանսպորտի շենքեր ու շինություններ և այլն) և իրականացվող շինարարական աշխատանքների նկարագրությունն՝ ըստ ոլորտների (բնակելի, հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ և կապի), ինչպես նաև օբյեկտի հիմնական ցուցանիշները, հարկայնությունը և այլն:» բառերը:

8) Կարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10.Հաշվետվության «Շինարարության ծավալը և գումարը /մ^2 / հազ. դրամ /» սյունակում լրացվում է շինարարության ծավալը (հատակագծային /կառուցապատվող/ մակերես) և գումարը (նախահաշվային արժեքը կամ շինարարության փաստացի արժեքը):»:

9) Կարգի 13-րդ կետում «...հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքները՝ ամբողջի հետ համեմատած տոկոսային հարաբերությամբ:» բառերը փոխարինել «...հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված աշխատանքների տոկոսային աճողական ցուցանիշները:» բառերով:

10) Կարգի 14-րդ կետում «...հերթականությամբ» բառից հետո լրացնել «...՝ ըստ շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտի կամ պայմանագրի» բառերը:

11) Կարգը լրացնել նոր 15-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«15. Հաշվետվությունը ներկայացվում է թղթային կնքված և էլեկտրոնային՝ Excel (Իքզել) տարբերակներով:»:

12) Հրամանի 4-րդ հավելվածով հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ 2/ 4-րդ կետից հանել «..., որոնցով հնարավոր է կապ հաստատել անձի հետ:» բառերը:

13) Կարգ 2-րդի 5-րդ կետի «Հ/հ» բառը փոխարինել «Հ/Հ» բառով:

14) Կարգ 2-րդը լրացնել նոր 13-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«13. Հաշվետվությունը ներկայացվում է թղթային կնքված և էլեկտրոնային՝ Excel (Իքզել) տարբերակներով:»:

Նախարար՝ Ն. Սարգսյան

«08» «VII» 2014թ